

Հաստատում են՝
«Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր Դ.Գյուրջինյան



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**Տիգրան Կարենի Սիմոնյանի «Խորհրդարանական կառավարման զարգացման
հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության
մարտահրավերների համատեքստում» թեմայով ԻԳ 00.02 «Քաղաքական
ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված
ատենախոսության վերաբերյալ**

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՄՀՔ ֆակուլտետի ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2025 թ. հոկտեմբերի 15-ի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի ժ/պ, փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանը, ք.գ.դ., պրոֆեսոր Վահե Դավթյանը, փ.գ.թ., դոցենտ Գևորգ Հակոբյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Արմեն Պետրոսյանը, ք.գ.թ., դոցենտ Նարեկ Գրիգորյանը, պ.գ.թ., դոցենտ Գեորգի Միրզաբեկյանը, ք.գ.թ., դոցենտ Մարգարիտ Պետրոսյանը, ավագ դասախոս Լուսինե Պողոսյանը:

Նիստի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, դրված էր Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 056 մասնագիտական խորհրդին հրապարակային պաշտպանության ներկայացված Տիգրան Կարենի Սիմոնյանի «Խորհրդարանական կառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում» թեմայով ԻԳ 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության քննարկումը:

Ելույթ ունեցավ ատենախոսության գրախոս պրոֆեսոր Վահե Դավթյանը՝ հրապարակելով իր գրավոր կարծիքը: Արտահայտվեցին նաև Վ.Ասլանյանը, Ա.Պետրոսյանը, Գ.Միրզաբեկյանը, Մ.Պետրոսյանը, Լ.Գրիգորյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի ժ/պ Վ. Ասլանյանը:

Քննարկելով Տիգրան Կարենի Սիմոնյանի՝ «Խորհրդարանական կառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսությունը՝ նիստի մասնակիցները կատարեցին հետևյալ դիտարկումները և նկատառումները.

Ատենախոսության թեման՝ «Խորհրդարանական կառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում», բացառիկ արդիականություն ունի Հայաստանի ժամանակակից քաղաքական հետազոտությունների համար: Դրա նշանակությունը պայմանավորված է պետական համակարգի խորքային վերափոխմամբ և բարդ աշխարհաքաղաքական իրավիճակով: Ժողովրդավարությունը շարունակում է մնալ զարգացման հիմնարար շարժիչ ուժը բազմազան և բարդ աշխարհակարգի պայմաններում: Ժողովրդավարական հասարակությունում կառավարումը դառնում է ավելի հաշվետու և թափանցիկ, ինչն օգնում է կանխել իշխանության չարաշահումները: Սա առանձնահատուկ նշանակություն ունի ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար, որոնք ձգտում են կառուցել լիարժեք ժողովրդավարական ինստիտուտներ՝ հաշվի առնելով իրենց ազգային առանձնահատկություններն ու իրավական մշակույթը:

Այս համատեքստում առանցքային դեր ունի պետական իշխանության բարձրագույն մարմինների ձևավորումն ազատ ժողովրդավարական ընտրությունների միջոցով, որոնք ոչ միայն խորհրդարանների, այլև հանրային իշխանության բոլոր ընտրովի մարմինների անկյունաքարն են: Կայուն ժողովրդավարության կայացումն ուղղակիորեն կախված է խորհրդարանական ընտրությունների անխոչընդոտ անցկացումից և օրենսդիր մարմնի արդյունավետ գործունեության ապահովումից: Հայաստանում 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո խորհրդարանական կառավարման մոդելին անցումը դիտարկվում է ոչ թե պարզապես որպես ձևի փոփոխություն, այլ որպես «վերադարձ ակունքներին»: Հենց այդ պատճառով խորհրդարանական կառավարման հիմնախնդիրների և առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ ազգային անվտանգության մարտահրավերների հետ անքակտելի կապի մեջ, ձեռք է բերում հատուկ կարևորություն: Անհրաժեշտ է ոչ միայն ամրապնդել նոր ինստիտուտները, այլև բարձրացնել դրանց դիմադրողականությունը և ներքին ու արտաքին սպառնալիքներին արդյունավետ արձագանքելու կարողությունը՝ դրանով իսկ ապահովելով պետության կայունությունը և հետագա ժողովրդավարական զարգացումը:

Ատենախոսության վերնագիրը համապատասխանում է դրա բովանդակությանը և կատարված ուսումնասիրության բնույթին: Հետազոտության վարկածը, նպատակը և խնդիրները հստակ են ձևակերպված:

Աշխատանքն աչքի է ընկնում գիտական նորույթով, մասնավորապես՝

- Ատենախոսության կենտրոնական գիտական նորույթը կայանում է **խորհրդարանական կառավարման համակարգային վերլուծության մեջ՝ անվտանգային սպառնալիքների տեսանկյունից**: Այս ուղղությունը, որը բավականին քիչ է ուսումնասիրվել տեղական և արտասահմանյան քաղաքագիտական գրականության մեջ, թույլ է տալիս ենթադրել, թե ինչպես են ազգային անվտանգության մարտահրավերները (տարածաշրջանային հակամարտություններ, աշխարհաքաղաքական ճնշումները և ներքին անկայունությունը) ազդում **օրենսդիր մարմնի աշխատանքի արդյունավետության, կոալիցիոն դինամիկայի և իշխանության նկատմամբ հանրային վստահության վրա**:
- Մշակվել է ինքնատիպ տեսական մոդել, որը համադրում է ինստիտուցիոնալ մոտեցումը անվտանգության ոլորտի հետազոտությունների և ժողովրդավարության տեսությունների հետ:
- Իրականացվել է խորը համեմատական վերլուծություն՝ համադրելով Հայաստանի քաղաքացիաիրավական փորձը Վրաստանի, Իսրայելի և այլ երկրների համապատասխան փորձի հետ: Սա թույլ է տալիս բացահայտել թե՛ համընդհանուր, թե՛ յուրահատուկ օրինաչափություններ այն պետությունների համար, որոնք բախվում են նմանատիպ ազգային անվտանգության մարտահրավերներին:
- Աշխատանքը ցայտուն կերպով ցույց է տալիս, թե անվտանգության ոլորտի ճգնաժամերն ինչպես են ազդում օրենսդրական գործունեության, դաշինքների կայունության և իշխանության նկատմամբ վստահության մակարդակի վրա:
- Առաջ է քաշվում այն թեզը, որ Հայաստանի համար 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով հաստատված խորհրդարանական մոդելը ոչ թե պարզապես կառավարման ձևի փոխառություն է, այլ **«վերադարձ ակունքներին» կամ Անկախության հռչակագրում** ամրագրված հիմնարար սկզբունքներին: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս խորհրդարանական համակարգը դիտարկել ոչ թե որպես արտաքին մոդել, այլ որպես անկախ պետության ինքնիշխանության և ժողովրդավարական արմատների ամրապնդման քայլ:

Արենախոսության կառուցվածքի և բովանդակության ակնարկ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, **երեք գլուխներից** (ութե նթագլուխներից), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

- **Ներածություն:** Հստակ սահմանում է հետազոտության արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, դրա օբյեկտն ու առարկան, ինչպես նաև մեթոդաբանական հիմքերը:
- **Առաջին գլուխը՝** «Խորհրդարանական կառավարումը, որպես համեմատական քաղաքագիտության օբյեկտ» նվիրված է հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերի հիմնավորմանը և խորհրդարանական կառավարման կառուցվածքային-ֆունկցիոնալ առանձնահատկությունների վերլուծությանը: Այն ներառում է խորհրդարանական արդյունավետության չափման մեթոդաբանական խնդիրների քննարկումով, հատկապես՝ օրենսդրական արտադրողականության, ներկայացուցչական և հաշվետվողականության գնահատումը: Գլխում հետազոտվում է խորհրդարանի պատմական էվոլյուցիան՝ սկսած հին աշխարհի ժողովներից մինչև ժամանակակից ազգային մարմիններ: Հիմնական տեսական ներդրումը խորհրդարանական կառավարման ազգային անվտանգության գործառույթների առանձնացումն է: Այս առումով դիտարկվում է օրենսդիր մարմնի դերը՝ վերահսկողության, օրենսդրության և քաղաքացիական ազատությունների պաշտպանության տեսանկյունից, ինչը կենսականորեն կարևոր է ժողովրդավարական համակարգերում ազգային անվտանգության մարտահրավերներին արձագանքելու ժամանակ:
- **Երկրորդ գլուխը՝** «Խորհրդարանի դերը՝ ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում» նվիրված է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարտահրավերների էմպիրիկ վերլուծությանը, որոնք ձևավորվել են ԽՍՀՄ փլուզման և Արցախի շուրջ հակամարտության համատեքստում: Նշվում է, թե ինչպես են տարածաշրջանային անկայունությունը և պատերազմական գործողությունները թելադրել ՀՀ ազգային անվտանգության դոկտրինայի վերանայման և քաղաքական առաջնահերթությունների փոփոխման անհրաժեշտությունը: Կիրառելով համեմատական մեթոդաբանություն՝ վերլուծվում են Վրաստանի, Ադրբեջանի և հատկապես Իսրայելի (Քնեսեթի) խորհրդարանների փորձը ազգային անվտանգության ճգնաժամերին արձագանքելու գործում: Իսրայելական մոդելի ուսումնասիրությունը (օրենսդրական ինքնավարություն, ռազմական և հետախուզական գործունեության վերահսկողություն) ծառայում է որպես օրինակ՝ ՀՀ Ազգային ժողովի համար գործառույթների ընդլայնման և կատարելագործման ուղիներ գտնելու համար, հատկապես՝ նախագահականից խորհրդարանական համակարգի անցման պայմաններում:
- **Երրորդ գլուխում՝** «Խորհրդարանական կառավարման դերը՝ կայուն զարգացման և ազգային անվտանգության ապահովման համատեքստում», վերլուծվում է ՀՀ խորհրդարանական կառավարման մոդելի ներքին զարգացումը և գործունեությունը քաղաքական-անվտանգային ճգնաժամերի

Ժամանակ: Ներկայացվում է ՀՀ հանրային իշխանության մարմինների զարգացումը՝ մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները, որոնք ամրագրեցին խորհրդարանական կառավարման համակարգը: Այս ձևաչափի արդյունավետությունը գնահատվում է արտակարգ իրավիճակների օրինակով, մասնավորապես՝ COVID-19 համավարակի և 2020թ. 44-օրյա Արցախյան պատերազմի համատեքստում: Յույց է տրվում, որ ռազմական դրության պայմաններում գործադիրը ստացել է անհամաչափ լիազորություններ, ինչը հանգեցրել է Ազգային ժողովի վերահսկողական դերի նվազմանը՝ ընդգծելով ինստիտուցիոնալ անորոշությունները: Քննարկում է նաև ՀՀ խորհրդարանական համակարգի հիմնական մարտահրավերները, ինչպիսիք են՝ քաղաքական կլիենտելիզմը և կոռուպցիոն ռիսկերը: Այս վերլուծությունների հիման վրա առաջարկվում են գործունե լուծումներ, որոնք ուղղված են խորհրդարանի դիմադրողականության և ժողովրդավարական արդյունավետության բարձրացմանը՝ ազգային անվտանգության սպառնալիքներին արդյունավետորեն դիմակայելու համար:

- **Եզրակացություն:** Ընդհանրացնում է ստացված արդյունքները և ձևակերպում է կոնկրետ առաջարկություններ, որոնք ուղղված են խորհրդարանական համակարգի ամրապնդմանը և դրա վերահսկողական գործառույթների ուժեղացմանը:

Արդյունքների հիմնավորվածությունը և գիտական արժեքը

Եզրահանգումների բարձր հավաստիությունն ապահովվում է աղբյուրների նկատմամբ համալիր մոտեցմամբ՝ ներառյալ գիտական գրականության, նորմատիվ-իրավական ակտերի և էմպիրիկ տվյալների վերլուծությունը: Համեմատական և ինստիտուցիոնալ վերլուծության նման մեթոդների կիրառումը արդյունքներին հաղորդում է գիտական խստություն: Ատենախոսությունը կարևոր ներդրում է Հայաստանի քաղաքական գիտության մեջ՝ լրացնելով պառլամենտարիզմի և անվտանգության խաչմերուկում առկա հետազոտական բացը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության տեքստին և արտացոլում է դրա բովանդակությունը անհրաժեշտ ամբողջականությամբ: Տ.Սիմոնյանի ատենախոսությունը գիտական որակավորման լուրջ աշխատանք է, որում արտացոլվում են ՀՀ-ում խորհրդարանական կառավարման զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում: Բոլոր արդյունքները նոր են և հրապարակված են առաջատար ամսագրերում: Նյութի ամբողջականությունն ու ճշգրտությունն արտացոլված են հրատարակված 7 գիտական հոդվածներում:

Մեկնաբանություններ և նկարառումներ

Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ արենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկարի ունենար մեր կողմից առաջարկվող հետևյալ դիտողությունները.

1. Գիտական հիմնավորվածության տեսանկյունից վիճահարույց են պաշտպանության ներկայացվող 3-րդ և 5-րդ դրույթները: Երրորդ կետում նշվում է, որ կառավարման մոդելի փոփոխությունը իրականացվել է աճող և ընթացող անվտանգային մարտահրավերներին զուգահեռ, սակայն հեղինակի կողմից հստակ չեն նշվում այդ մարտահրավերները: «Մարտահրավերներ» բառը կարող է հավասարաչափ ընկալվել և որպես ադրբեջանական բանակի սպառազինման արդիականացման գործընթացը և անգամ երկրի ներսում տիրող անկայուն իրավիճակը (միևնույն փաստարկը կարող է բերվել «սպառնալիք», «վտանգ» եզրերի կիրառման վերաբերյալ): Միևնույն ժամանակ, հինգերորդ կետում հեղինակը նշում է, որ կառավարման մոդելի փոփոխությունը առաջին հերթին պետք է վերլուծվի հիբրիդային և տեղեկատվական պատերազմի համատեքստում, սակայն հետազոտության նպատակին վերաբերող հատվածում հեղինակը նշում է, որ աշխատանքը առաջնահերթ անդրադառնում է կառավարման մոդելի փոփոխությանը անկախության հռչակագրի համատեքստում՝ որպես «վերադարձ ակունքներին»:
2. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող 1-ին գլխի և դրանում ներառված չորս ենթագլուխների վերտառությունը: Հետազոտության առաջին գլուխը վերնագրված է «Խորհրդարանական կառավարումը որպես համեմատական քաղաքագիտության օբյեկտ» իսկ ենթագլուխները համապատասխանաբար՝ «Խորհրդարանական կառավարման ուսումնասիրության տեսամեթոդաբանական որոշ հիմնախնդիրները», «Խորհրդարանական կառավարման կառուցվածքային ու ֆունկցիոնալ առանձնահատկությունները», «Խորհրդարանական կառավարման ազգային անվտանգային գործառույթները» և «Խորհրդարանները և ազգային անվտանգությունը ժողովրդավարական համակարգերում վերահսկողություն, օրենսդրություն և քաղաքացիական ազատությունների մարտահրավեր»: Ի գիտություն ընդունելով, որ հեղինակի կողմից ներկայացված աշխատությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությանը, վերոնշյալ ենթագլուխներում պակասում է անդրադարձը Հայաստանի օրինակին, փոխարենը հեղինակը օգտագործել է զարգացած ժողովրդավար երկրների, ի դեմս Միացյալ Թագավորության, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի օրինակները՝ նկարագրելով, թե ինչ

ազդեցություն և դեր ունի խորհրդարանը նախագահական կառավարման մոդել որդեգրած պետություններում:

3. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող չորրորդ դրույթը: Պնդումն առ այն, որ հետազոտությունը կարող է մոդելավորվել նմանատիպ անվտանգային միջավայր ունեցող այլ երկրների վրա, հռետորական է: Հեղինակի կողմից չի ներկայացվում, թե որոնք կարող են լինել այդ պետությունները և արդյոք նրանց անվտանգային խնդիրները նմանություն ունեն Հայաստանի խնդիրների հետ:
4. Նկատվել են որոշ, թեև աննշան, տեխնիկական վրիպակներ, դիցուք՝ գրականության ցանկում կրկնվող և աղբյուրների թիվը 12-ով ավելացնող *Ibid.* ներս սպրդած վրիպակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ամբողջական գիտական արժեքը: Հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու իրականացված հետազոտական աշխատանքը, վերջնարդյունք եզրահանգումները և առաջարկությունները, կարծում ենք, որ Տիգրան Կարենի Սիմոնյանի քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «խորհրդարանական կառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակը արժանի է ԻԳ 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ ք.գ.թ. գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ԲՊՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2025թ. հոկտեմբերի 15-ի թիվ 2 նիստում:


Վարդան Ասլանյան

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի
ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ժ/պ

«Փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանի ստորագրությունը հաստատում եմ»:
ԲՊՀ գիտական քարտուղար՝

Հասմիկ Փիլավջյան



Տեղեկություններ առաջատար կազմակերպության մասին.

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան

Հասցե՝ ք.Երևան 0002, Թումանյան 42,

Հեռ.՝ (010) 522 020